Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 13-ի նիստի N 30
արձանագրային որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2017-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ քաղաքացիական օրենսգրքում մտավոր սեփականության պաշտպա-նությանն ուղղված փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ եղանակների սահմանում, գործող օրենքում տեղ գտած թերությունների և անհստակությունների վերացում, դատարանների կողմից իրավունքի պաշտպանության այս կամ այն եղանակը կիրառելիս առավել օբյեկտիվ չափանիշներով առաջնորդվելու նախադրյալների ամրապնդում: | ՀՀ արդարադատության նախարարություն | 2017 թվականի 3-րդ եռամսյակ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում |
| 2. | Մտավոր սեփականության ոլորտում իրավատերերի պաշտպանության ապահովման և հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ | Մտավոր սեփականության բնագավառում ներ-գրավված հասարակական կազմակերպություն-ների և այլ շահագրգիռ իրավատերերի հետ քննարկումների կազմակերպում, ՀՀ ոստիկա-նության Police.am կայքում բացահայտված դեպ-քերի վերաբերյալ տեղեկատվության տեղադրում և վիճակագրության ներկայացում, 02 լրատվա-կան հաղորդաշարի միջոցով կատարված աշխա-տանքների լուսաբանում: | ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br>«Հայիեղինակ» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ) | 2017-2018 թվականներ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում |
| 3. | ՀՀ պետական գույքի կառավարման հայեցակարգի մշակում | Պետական գույքի օգտագործման բարելավում | ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն<br>Հանրապետական գործադիր մարմիններ | 2017 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 4. | Պետություն-մասնավոր գործընկե-րության համար օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների մշակում և ներդնում | Պետություն-մասնավոր գործընկերության համար իրավական հիմքերի ապահովում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 5. | ՀՀ դատական օրենսգրքում փոփոխութ-յունների առաջարկությունների ներկայացում՝ ուղղված դատական | Դատական համակարգի ներքին և արտաքին անկախության երաշխիքների սահմանում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2017 թվականի 3-րդ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում |

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| | համակարգի անկախության ապահովմանը | | | եռամսյակ | |
| 6. | Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում և վերակառուցում | Ճանապարհների որակի բարելավում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | Պարբերա-բար | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 7. | Օդային հաղորդակցությունների վերաբերյալ գործող միջկառավարական համաձայնագրերի վերանայում՝ արդիականացում և գործող սահմանափակումների վերացում, նոր համաձայնագրերի կնքում | ՀՀ ավիացիոն շուկայի ազատականացում, շուկայի մասնակիցների համար հավասար մրցակցային դաշտի ստեղծում և վերջիններիս տնտեսական գործունեությանը խոչընդոտող արգելքների վերացում: | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 8. | Օդանավ շահագործողներին թույլտվությունների տրամադրման առցանց համակարգի ներդնում | Քաղաքացիական ավիացիայի ոլորտում բիզնես միջավայրի բարելավում, թույլտվությունների տրամադրման գործընթացի պարզեցում և թափանցիկության ապահովում: | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 9. | Բյուջետային ավիաընկերությունների կողմից դեպի Գյումրու «Շիրակ» օդանավակայան չվերթների իրականացման հնարավորությունների ընդլայնում | ՀՀ ավիացիոն շուկայի դիվերսիկացմանն ուղղված միջոցառումների իրականացնում և մատչելի ուղևորափոխադրումների ապահովում: | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 10. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. սեպտեմբերի 2-ի նիստի N 34 արձանագրության 2-րդ կետով հավանության արժանացած «Երեխաների և դեռահասների առող-ջության բարելավման ռազմավարութ-յանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավա-նություն տալու մասին» արձանագրային որոշմամբ հաստատված՝ 2017-2018թթ. համար նախատեսված միջոցառումների իրականացում | Հայաստանի երեխաների և դեռահասների զարգացում, առողջության և բարեկեցության ապահովում, մահացության և հիվանդացության իջեցում: | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2017-2018 թվականներ | ՀՀ պետական բյուջե (լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում)<br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 11. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի | Երեխաներին կրծքով սնուցման կազմակերպման պատշաճ գործելակերպի ներդրում՝ ուղղված | ՀՀ առողջապահության նախարարություն | 2017-2018 թվականներ | ՀՀ պետական |

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| | «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» N 1353-Ն որոշմամբ հաստատված՝ 2017-2018թթ համար նախատեսված միջոցառումների իրականացում | նրանց առողջ աճի և զարգացման ապահովմանը, հիվանդացության և մահացության կրճատմանը, այդ թվում՝ վաղ հասակի երեխաների սնուցման գործելակերպի բարելավման, կրծքով կերակրման աջակցության և խրախուսման ճանապարհով: | | | բյուջե (լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում) ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 12. | Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմների մշակում ու ներդնում | Տարրական և միջնակարգ կրթության ընդգրկվածության բարձրացում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2017-2018 թվականներ | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 13. | Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթության մատչելիության, կրթական գործընթացի առավելագույն մասնակցության ապահովում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ | 2017-2018 թվականներ | ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 14. | «Կառավարում» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի մշակում և հաստատում | Կառավարման դպրոցների որակի բարելավում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ բուհեր (համաձայնությամբ) | 2017-2018 թվականներ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 15. | Մրցակցության պաշտպանության ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների մշակում | Համակենտրոնացումների թույլատրման և վերահսկողության արդյունավետության բարձրացում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 16. | Հանրապետական գործադիր և այլ պետական մարմինների հետ համագործակցություն և տեղեկատվության փոխանակում, նրանց կողմից ընդունվող նորմատիվ իրավական | Հավասար մրցակցային դաշտի ապահովում, մրցակցությանը խոչընդոտող իրավական ակտերի վեր հանում և դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| | ակտերի ուսումնասիրություն | | | | |
| 17. | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքների լուսաբանմանն ուղղված աշխատանքների ակտիվացում | ՀՀ-ում մրցակցության պաշտպանությանն ուղղված քաղաքականության ուղղությունների, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանութ-յան պետական հանձնաժողովի լիազորություն-ների և կատարած աշխատանքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | 2017 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 18. | Թափուր և նոր ստեղծված աշխատատեղերի էլեկտրոնային հարթակի ձևավորման մեկնարկ | Բարձր որակավորում պահանջող և բարձր վար-ձատրվող թափուր կամ նոր ստեղծված աշխա-տատեղերի հավաքագրման, դրանք համապա-տասխան մասնագետներով համալրման հնարա-վորության ստեղծում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 19. | Առցանց եղանակով աշխատանքի տոնավաճառների կազմակերպում, այդ թվում՝ այլ երկրների մասնագետների համար | Աշխատաշուկայի պահանջարկին համապատաս-խան մասնագետներ ներգրավելու երկրի կարողությունների զարգացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 20. | Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում կանանց ներգրավվածության մեծացում՝ ըստ ծրագրերի առաջնահերթությունների սահմանման և իրացման ճանապարհով | Աշխատուժի մեջ կանանց մասնակցության աստիճանի բարձրացմանը նպաստում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2018 թվական | ՀՀ պետական բյուջե (Զբաղվածության կարգավորման պետական ծրագ-րերով նախա-տեսված հատկա-ցումների շրջանակներում) |
| 21. | Ընկերությունների թափանցիկության բարձրացման և միջազգային ռեյտինգների ստացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Կապիտալի տեղական շուկայի միջոցով ֆինանսավորման պրակտիկայի զարգացում | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2017-2018 թվականներ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 22. | Միջազգային շրջանակներում կիրառ-վող լավագույն փորձի, մասնավորա-պես՝ Բազել 3 համաձայնագրի դրույթ-ների՝ ՀՀ բանկային համակարգում ներդրման նպատակահարմարության գնահատում, փորձարկում և ներդրում | Բանկային համակարգի կայունության ամրապնդում | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2017-2018 թվականներ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 23. | ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ | Երաշխավորության ինստիտուտի | ՀՀ կենտրոնական բանկ | 2017 | Լրացուցիչ |

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| | օրենքներում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | կատարելագործում և երաշխավորների իրավունքների պաշտպանություն | (համաձայնությամբ) | թվական | ֆինանսավորում չի պահանջվում |
| 24. | ՀՀ տեխնոլոգիական զարգացման ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակում | Հայաստանի տեխնոլոգիական զարգացման տեսլականի, քաղաքականության հիմնական ուղղությունների և քայլերի սահմանում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 25. | Տեխնոլոգիական կազմակերպություն-ների, նրանց կողմից թողարկվող արդյունքների, առկա տեխնոլոգիաների և սարքավորումների շտեմարանի և ցանցի մշակում և գործարկում | Տեխնոլոգիական ոլորտում առկա կարողութ-յունների գնահատում և կարիքների բացա-հայտում, այդ հիմքով միջազգային համապա-տասխան ծրագրերի շրջանակներում համագոր-ծակցության ձևավորում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 26. | ՀՀ տարածքում ֆիքսված լայնաշերտ ինտերնետ ցանցի և ծառայությունների ընդլայնման, ինչպես նաև բաժանորդագրությունների թվի աճի ուղղությամբ միջոցառումների մշակում | Ֆիքսված լայնաշերտ ինտերնետի կիրառության խթանում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 27. | ՀՀ տարածքում 3G և 4G տեխնոլո-գիայով լայնաշերտ ինտերնետ ցանցի և ծառայությունների ընդլայնման, ինչպես նաև բաժանորդագրությունների թվի աճի ուղղությամբ միջոցառումների մշակում | Շարժական լայնաշերտ կապի հասանելիության բարձրացում և կիրառության ընդլայնում | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 28. | Հայկական ապրանքների համար թիրախային շուկաներ ներմուծման ընթացակարգերի և օրենսդրության պահանջների վերաբերյալ իրազեկման հարթակի ապահովում | Գործող ընթացակարգերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական հասանելիության ապահովում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2017 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 29. | Հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակի ստեղծում | Տեղական արտադրողների և արտահանողների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 30. | Արտահանման թիրախային | Տեղական արտադրողների և արտահանողների | ՀՀ տնտեսական զարգացման և | 2017-2018 | ՀՀ պետական |

| հ/հ | ՀԵՆԱՍՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿԸ | ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԺԱՄԿԵՏԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| | շուկաներում «Made in Armenia» միջոցառումների կազմակերպում | խթանում և արտաքին շուկաներում գործընկերային կապերի խրախուսում | ներդրումների նախարարություն | թվականներ | բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 31. | Բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում բնական կերահան-դակների արդյունավետ օգտագործման, անասնապահական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումների իրականացում | Բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում անասնապահության արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2017 թվական | ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 32. | Հետազոտություններ ու մշակումներ իրականացնող լաբորատորիաների ձևավորման նպատակով անդրազգային կազմակերպությունների ներգրավում | Առնվազն 2 անդրազգային կազմակերպության ներգրավում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 33. | Առաջադեմ տեխնոլոգիական հիմքով արտադրություններին աջակցության հատուկ ռեժիմների տրամադրման չափորոշիչների ներդրման հայեցակարգի ներկայացում | Արտադրության տեխնոլոգիական արդիականացման նպատակով աջակցության ինստիտուցիոնալ հիմքերի ապահովում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 34. | Գյուղատնտեսությունում տնտեսա-վարողներին խորհրդատվության տրամադրման միջոցառումների իրականացում | Բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում ծառացած խնդիրների լուծման ուղղությունների առաջադրում և դրանց կիրառման արդյունքում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2017 թվական | ՀՀ պետական բյուջե (լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում) |
| 35. | «Արդյունաբերական նմուշների (արդյունաբերական դիզայնի) մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | Երկրում ինովացիոն համակարգի զարգացման նպատակով արդյունաբերական նմուշների իրավական պահպանության համակարգի բարելավում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 36. | «Գյուտերի և օգտակար մոդելների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | Գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության առավել կատարելագործված համակարգի ներդնում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018 թվական | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |